

1957

84
7-68

2002

2003

84-3
Դ-68

Ա Լ Փ 0 6 0 Գ 0 4 է

54

✓78

I.

Պ Ա Պ Ի Զ Ո Ր Ի Ն

Ա Խ Ա
հ.

II.

Վ Ե Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Ե Լ Ի Հ Ա Յ Թ

Գ Օ Շ Ե Ր Ի Ց Ք Ի Ւ



Թ Ա Ր Դ Մ Ա Ն Ե Ց Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Ե Ն Ե Ց

Ա. Ա. Ա. Բ. Ա. Պ Ա Տ Ե Ա. Ե.



Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարան Վ ա ս տ Հ ր ա մ ա ր ա կ չ ա կ ա ն Ը ն կ ե լ ո ւ թ ե ա ն

1900.

ԱՐ.

84-

Դ-68

ԱՂՓՈՆՍ ԴՕԴԵ

2085

113

I.

ՊԱՊԻ ԶՈՐԻՆ



ԹԱՐԳՄԱՆԵՑ ՁՐԱՆԵՐՔՆԵՑ

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՅՐ ԳՈՅԵՐԻ ՑՔԻՆ

Վ. Վ. Բ Ի Ֆ Ը Պ Ե Ս Ե Ա Ն .



Թ. Ի Ֆ Լ Ի Ս


Տպարան Գ. քաց Հրատարակչական Ընկերութեան:
Տիպ. Груз. Изд. Т-ва, Б.-Ванская ул.

2011

4900 11.00.10

31050-42

Վ Գ Պ Ա Դ Ա Ր Ա Բ



Дозволено Цензурою, 4 марта 1900 г. Тифлисъ.

14180-58 q-

Արժանապատիւ հայր

Դ Ա Ս Ի Ա Ր Ա Կ Ի Ս

Տ. Ա ա չ ա կ ք ա ն ա յ Ա ա չ ա կ ե ա ն ց ի ն

Ա Մ Ե Ն Ա Խ Ո Ն Ա Ր Հ Ն Ո Ւ Ե Բ,

Ի Ն Յ Ա Ն Ո Ր Դ Ի Ս Կ Ա Ծ Ե Ա Յ Բ :

Կ. Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ե Ա Ն :

211

Պ Ա Պ Ի Տ Տ Ո Ր Ի Ն

Հաղբարականի վեցից հմտված մէջ չկա ու
Չ մարտառ մշտին սպան այդ ըլոյ քար մասի
արայք կածուառ մշտին ուս գումա ուսուց
Հաղբարականի վեցից հմտված մարտին այս գումա ուսուց

Պ Ա Պ Ի Զ Ո Ր Ի Ն*)



Բոլոր գեղեցիկ ասացուածներից, աւածներից
կամ առակներից, որոնցով մեր Պրօվանսի գիւղա-
ցիները զարդարում են իրանց խօսակցութիւնը, ես
չգիտեմ մի ուրիշ աւելի նկարագեղն և աւելի հիա-
նալին բան հետևեալը: Տասնեհինգ մղոն հեռա-
ւորութեամբ իմ չրաղացի շուրջը, երբ խօսում են
մի ոխակալ և վրէժինդիր մարդու մասին, ասում
են. «Այդ մարդը, զգոյշ եղէք... դա պապի ջորու
նման է, որ իւր աքացին եօթ տարի մտքումն է
պահում»:

Ես երկար ժամանակ հետամուտ եմ եղել, թէ
այս առածը որտեղից կարող էր առաջ գալ, թէ
ինչ բան էր այս պապի ջորին և այս եօթ տարի
մտքում պահուած աքացին: Այդ մասին ինձ ոչ ոք
տեղեկութիւն չկարողացաւ տալ, ոչ նոյն-իսկ
ֆրանսէ Մամային, իմ սրինգ ածողը, որ իւր գա-
ւառի աւանդութիւնները հինգ մատի պէս գիտէր:
ֆրանսէն ինձ նման կարծում է, որ դրա մասին

*) Նամակներ իմ ջրաղացից:

մի որեւէ հին, Աւինիօնի երկրի ժամանակագրութիւն կայ, բայց դրա մասին միայն առակօրէն է լսել... «Դուք այս միմիայն ծպուռների գրադարանում կըգտնէք», ինձ ասաց ծեր սրնգահարը՝ ծիծաղելով։ Այս միտքն ինձ հաւանական թուաց, և որովհետև ճպուռների գրադարանը իմ դրան մօտն է գտնւում՝ գնացի ութ օր այնտեղ փակւեցի։

Դա մի սքանչելի գրադարան է, հիանալի կերպով կառուցուած, գեշեր և ցերեկ բաց բանաստեղծների համար, ուր ծառայում են փոքրիկ ձնձղահար գրադարանապետներ, որ միշտ նուագում են։ Ես այնտեղ անցկացրի մի քանի քաղցր օրեր, մի շաբաթուայ խուզարկութիւնից յետոյ—մէջքիս վրայ պարկած—վերջապէս գտայ այն, ինչ որ ցանկանում էի, այսինքն իմ ջորու և եօթ տարի մտքում պահուած այն համբաւաւոր աքացու պատմութիւնը։ Պատմութիւնը գեղեցիկ է թէև մի քիչ անպաճոյն, և ես կփորձեմ պատմել ձեզ այնպէս, ինչպէս ես երեկ առաջօտ կարդացի հնութեան գոյն կրող մի ձեռագրի մէջ, որից չոր յուսամի (Լաւանդալ) մի լաւ հոտ էր բուրում և իբրև նշան ունէր Միածնի պատկերներ։

Ով պապերի ժամանակուայ Աւինիօնը չէ տեսել, նա ոչինչ չէ տեսել։ Զուարթութեան, կեանքի, կենդանութեան, տօների շքեղութեան վերաբերու-

թեամբ, երբէք նրա նման քաղաք չէ եղել։ Այնտեղ կարելի էր տեսնել առաւօտից մինչև երեկոյ թափօրներ, ուխտաւորների խնճեր, ծաղկեներով և գորգերով ծածկուած փողոցներ, կարդինալների Որոնի վրայով ժամանելը, Հողմածածան գրօշակներ, դրօշակագարդ նաւեր, Հրապարակի վրայ լատինելէն երգող պապի վինուորներին, ողորմութիւն հաւաքող եղբայրների կոչնակներ, յետոյ, վերևից գէպի վայր տներ, որ խոնւում էին պապական մեծ պալատի շուրջը, ինչպէս մեղուները փեթակի շուրջը։ Մարդուս ականջն էին խլացնում ժանեկագործների թըխկթըխկոցը, մաքուկի գնալ գալը՝ շուրջառի ոսկին հիւսելիս, բաժկաման քանդակողների փոքրիկ մուրճերի ձախնը, վնագործի դաշնակներ յարդարելու հնչիւնները, ոստանայնկուհիների օրհներգները։ Գրանցից աւելի բարձր հնչում էին զանգակները և մի քանի թմբուկների անլնդհատ թնդոցը, որ որոտում էին կամրջի կողմից։ Որովհետև երբ մեր ժողովուրդը զս՛ է պէտք է պարէ, պէտք է որ պարէ, և որովհետև այդ ժամանակ քաղաքի փողոցները Փարանդօլի (մի տեսակ պար) համար շատ նեղ էին, թմբկահարներ և սրինդ ածողներ կանգնուում էին Աւինիօնի կամրջի վրայ, Որոնի զով քամու դիմաց, և գեշեր ցերեկ մարդիկ այնտեղ պարում էին ու պարում... Ո՞հ, եղջանիկ ժամանակը, երջանիկ քաղաքը։ Իութ զէնքեր, պէտական բան-

դեր, ուր գինի էին պաշում զովացնելու համար: Ոչ երբէք սով, ոչ երբէք պատերազմ: Աչա ինչ-պէս Վենասքեան կոմսութեան պապերը գիտէին կառավարել իրենց ժողովուրդը, աչա թէ ինչու համար ժողովուրդն այնքան ափսոսում է նրանց:

Սակայն մի պապ կար, մի բարի ծերուկ, որին Բօնիֆաս էին անուանում... Ո՛չ, դրա համար Աւինիօնում որքան արտասուքներ թափուեցին, երբ մեռաւ: Նա այնքան սիրելի իշխան էր, այնքան շնորհալի, այնքան սիրուն ժպտում էր մարդուս երեսին իւր ջորու բարցրութիւնից, և երբ մէկն անցնում էր նրա մօտով—լինէր դա մի խեղճ ներկարար կամ քաղաքի մեծ դատաւոր—նա նրան տալիս էր իւր օրհնութիւնը մեծ քաղաքավորթեամբ:

Նիշտ Խվլտոտի¹⁾ մի պապ, բայց Պրօվանսի Խվլտոտի, իւր յատուկ նուրբ ժպիտով, մարիմխոտի (marjolaine) մի ցղոտ գտակի վրայ և ոչ մի Յովհաննա: Այս բարի հօր միակ Յովհաննան, եթէ իրբէք դա գոյութիւն ունէր, այդին էր, մի փոքրիկ այգի, որ ինքն անձամբ էր տնկել Աւինիօնից երեք մղոն հեռու, Նատօնէօֆի մըտենիների մէջ:

¹⁾Մի նմանութիւն է Բէռանժէի (roid'γνετο) Խվլտոտի թագաւոր բանաստեղծութեան հետ:

Ամէն կիւրակի, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ այս պատկառելի մարդը գնում էր իւր այդ սիրելուն պաշտելու. և երբ այնտեղ վերը նստած էր լինում գեղեցիկ արևելի դիմաց, իւր ջորին մօտը, կարդինալներով շրջապատուած, որոնք փըռ-ւում էին ծառերի կողերի մօտ, այն ժամանակ բաց էր անել տալիս իւր այգու գինու մի շիշ—այս սուտակի գունով գեղեցիկ գինին, որ այդ ժամանակից սկսած կոչում է նորդղեկի-պապերի գինի—կում կում ճաշակում էր այդ, նալելով իւր այգուն: Ապա, շիշը դատարկելուց յետոյ, մութն ընկնելիս, նա ամբողջ միաբանական խումբն յետել ձգած մտնում էր քաղաք, և երբ անցնում էր Աւինիօնի կամրջով, թմբուկների և Փարանդուների միջով, նրա ջորին երաժշտութեան ընթացքին յարմարուելով՝ ոստիւններ էր գործում, մինչդեռ ինքն իւր գտակով պարի չափն էր խփում, որից խիստ գայթակղում էին կարդինալները, բայց բոլոր ժողովուրդն ասում էր, «Ո՛չ, ի՞նչ բարի իշխան, ո՛չ, ի՞նչ քաջ պապ»:

Նատօնէօֆ այգուց յետոյ, աշխարհումս պապի ամենասիրելի բանը իւր ջորին էր: Այս բարեմիտ մարդը խենթանում էր անասունի վրայ: Ամեն երեկոյ, անկողին մտնելուց առաջ գնում էր տեսնելու, թէ նրա ախոռը լաւ փակուած էր, թէ նրա մսրում պակաս բան չկար, և երբէք սե-

զանից չէր վեր կենում առանց իւր աչքի առաջ պատրաստել տալու մի սկահակ գինի Փրանսահական ձեռվ, առատ անուշաչոտութիւններով և շաքարով, որ հակառակ իւր կարդինալների նկատողութիւններին ինքն անձամբ էր տանում նրան։ Պէտք է ասել, որ կենդանին արժէր այդ նեղութեան։ Դա մի գեղեցիկ ջորի էր, աւ, կարմիր բծերով, ոտքերն՝ ամուր, մազերը՝ փալուն, գաւակը լիքը և լայն—հպարտ էր բռնում իւր փոքր չոր գլուխը, ամբողջովին զարդարուած գլխանոցի ծոսերով, հանգուցներով, արծաթեայ բուժոժներով, ժապաւենի փնջիկներով, հրեշտակի պէս քաղցրադէմ էր, աչքերը աննենգ և երկու մշտատատան, երկար ականջներով, որ նրան բարի երեխայի կերպարանք էին տալիս... Ամբողջ Աւինիօնը նրան լարգում էր, և երբ փողոցներով գնում էր, քնքութիւն չէր մնում, որ նրան ցոյց չտային, որովհետեւ ամենքը գիտէին, որ այդ էր արքունիքում պատիւ գտնելու ամենաապահով միջոցը, և որ պապի ջորին իւր անմեղ դէմքով շատերին բախտաւորեցըլ է, դրան ապացուց էր Տիստէ Վէդէն և իւր սքանչելի արկածը։

Ալս Տիստէ Վէդէն, իսկապէս լիրը լակոտին մէկն էր, որին իւր հայրը Գիւի Վէդէն, ոսկու քանդակագործը, ստիպուած էր եղել տնից քըշելու, որովհետեւ չէր ուզում ոչինչ անել և գլխից

Հանում էր աշակեցտներին։ Եօթ ամիս շարունակ նրան կարելի էր տեսնել քարշ գալիս ամենուրեք Աւինիօնում, բայց զլխաւորապէս պապի աան կողմերում, որովհետեւ երկար ժամանակից ի վեր անամօթի միտքը պապի ջորու վրայ էր, և գուք կը տէսնէք, որ այդ մի խորամանկութիւն էր... Մի օր, երբ Նորին Օրբութիւնը իւր անասունի հետ պատնէշների տակ, մեն մենակ զբօսնում էր, ահաւասիկ իմ Տէստէն նրան է մօտենում և հիացած գէմքով, ձեռքերը միմեանց կցած ասում է, «Ո՞՛չ, Աստուած իմ, Վէհ սուրբ հայր, այդ ինչ լաւ ջորի ունէք դուք... Թոյլ տուէք ինձ, մի քիչ նրան նայեմ... Ո՞՛չ, իմ պապ, գեղեցիկ ջորին... Գերմանիայի կայսրը մի ալդպիսին չունի»—Եւ փաղաքշում էր նրան, և նրա հետ այնպէս քաղցրութեամբ էր խօսում, ինչպէս մի օրիորդի հետ, «Եկէք ալստեղ, իմ գոհարս, իմ գանձս, իմ ընտիր մարգարիտս...»։ Եւ բարի պապը լուզված ասում էր ինքն իրան. «Ինչ լաւ, բարի տղայ է... Խնչպէս լու է վարւում իմ ջորու հետ»։ Եւ յետով, հետեւեալ օրը գիտէք ինչ պատահեց։ Տէստէ Վէտէն իւր հին, գեղին բաճկոնը փոխեց մի գեղեցիկ, ծոպաւոր, քահանայական շապկի հետ, մի մանիշակագոյն մետաքսից վերարկու, օղակաւոր կօշիկներ հագաւ և մտաւ պապի վեհարանը, ուր իրանից առաջ ազնուականների որդիներից և կար-

Դինալների եղբօր որդիներից ի զատ, երբէք ոչոք
չէր ընդունուել: Այս ի՞նչ բան է ինտրիգը...
Բայց Տեստէն դրանով չբաւականացաւ:

Մի անգամ, արդէն պապի սպասաւորութեան
մէջ մտնելով՝ չարածճին շարունակեց նոյն խաղը,
որ իրեն այնքան լաւ յաջողուել էր: Ամենքի հետ
լանդուգն էր վարում, միայն ջորու մասին ուշա.
դիր և նախատեսող էր, և միշտ կարելի էր ոլա-
տահել նրան պալատի բակերում, ձեռքին մի
բուռ գարի, կամ մի խուրձ առւոյտ, որի վարդա-
դոյն ողկոյզները քնքշութեամբ ցնցում էր, սուրբ
Հօր պատշգամբին նայելով, այնպիսի մի դէմքով,
որ կարծես ասելիս լինէր, «Հը... ում համար է
սա...»: Այնքան արեց, որ վերջապէս բարեմիտ
պապը իրան ծերացած զգալով՝ լիովին նրան թո-
ղեց ախոռի վրայ հսկելու և ջորուն գինու սկա-
հակը տանելու խնամքը, որի վրայ կարդինալներն
այլևս չէին ծիծաղում:

Չորուն էլ չէր ծիծաղեցնում այս տնօրինու-
թիւնը... Հիմայ իւր գինու ժամանակ նա տեսնում
էր, որ իր մօտ գալիս էին միշտ հինգ կամ վեց
վեհարանի փոքրիկ մոնթեր, որ շուտով իրենց վե-
րարկուներով ու ժանեակներով յարդի մէջ թաք
էին կենում, յետոյ մի ըոսկ վերջ անուշահոտու-
թեան և շաքարի մի տաք և քաղցր հոտ լցնում
էր ախոռը, և Տէստէ Վէտէն երևում էր զգուշու-

թեամբ, գինու սկահակը ձեռքին: Այդ ժամանակ
սկսում էր թշուառ կենդանու նահատակու-
թիւնը:

Այս անուշահոտ գինին, որ այնքան սիրում
էր նա, որ նրան տաքացնում էր, թե էր էր տա-
լիս՝ անգիտութեամբ նրա մսուրի մէջն էլն դնում,
որ հոտ քաշէ, յետոյ, երբ արդէն ուունգները
լցում էր այդ բուրմունքով՝ վախի՛ր, քեզ տես-
նեմ: Վարդի վայլով գեղեցիկ լմպելիքը ամբող-
ջապէս գնում էր այս անպիտանների կոկորդը...
Եւ դեռ եթէ ուրիշ բան չանէին բացի նրա գի-
նին գողանալուց. բայց այս փոքրիկ մոնթերը սա-
տանայ էին դառնում, երբ խմում էին... Մէկը
նրա ականջիցն էր քաշում, միւսը պոչից, Քիքէն
մէջքի վրայ էր բարձրանում, Բէլիւգէն իւր գտակը
փորձում էր նրա գլխին, և այս չարածճներից ոչ
մէկը չէր մտածում, որ թլակողին մի հարուած
տալով, կամ նոյն-իսկ մի աքացով քաջ կենդանին
կկարողանար նրանց ուղարկել բեկուալին աստղը
և կամ աւելի ևս հեռու... Բայց ոչ, հանաք բան
չէ պապի ջորի լինելը, ներողամտութեանց և օր-
հնութեանց ջորի: Այս տղայք ինչ ասես անում
էին, բայց նա չէր զայրանում, նա ոխ էր պահում
միմիայն Տէստէ Վէտէի դէմ: Օրինակ, երբ զգում
էր որ իւր յետեռումն է նա, սմբակը քոր էր գա-
լիս, և իրաւացի: Այս սրիկայ Տէստէն նրա գլխին

Ե՞նչ տգեղ խաղ ասես չէր խաղում, շատ անգութ
Հնարագիտութիւններ ունէր նա խմելուց յետոյ...:

Մի օր խելքին չփչէ նրան իւր հետ վեհա-
րանի զանգակատունը բարձրացնել, բարձր, շատ
բարձր պալատի գագաթը: Եւ ինչ որ ես ձեզ ա-
սում եմ, առասպել չէ, երկու հարիւր հոգար
Պրօվանսացիներ տեսելեն: Երեակաեցէք այս դըժ-
բաղդ ջորու սարսափը, երբ մի ժամ առխարիսափ,
շումուռագալով մի օձապտոյտ սանդուխքով, չլ-
գիտեմ որքան աստիճաններ մագկցելով՝ լանկարծ
իրան գտաւ մի շացուցիչ լուսով լուսաւորուած
տախտակամածի վրայ, և ուր իրանից հազար ոտք
ցած, նա նշմարեց բոլորովին մի ֆանտաստիքական
Աւինիօն: Չուկայի խանութները կաղիններից մեծ
չէին երեսում, իրանց զօրանոցի առաջ կանգնած
պատի զինուորները կարմիր մըշիւնների էին նման-
ուում, միւս կողմից, արծաթէ մի թելի վրայ, մի
փոքրիկ մանրանդիտային կտուըջ, ուր մարդիկ
պարում էին ու պարում... Ո՛հ, խեղճ կենդանի:
Ի՞նչ լանկարծական արհաւերք, նրա արձակած
ճչից պալատի պատուհանների բոլոր ապակիները
գողացին:

«Ի՞նչ կայ, ի՞նչ են անում նրան», աղաղակեց
բարի պապը, շտապելով պատշգամբի վրայ:

Տէստէ Վէտէն բակումն էր արդէն, լաց լի-
նելու և մազերը փետելու դէմք առած... Ո՛հ,

վեհ սուրբ հալը, այն է որ.. Այսինք, Կաթուկիր ջո-
րին... Աստուած իմ, ի՞նչ կլինենք... Այսիւ պա-
տահէլ, ու ձեր ջորին բարձրացնել է զանգակա-
տունը...

— Մեն մենակի:

— Այս, վեհ սուրբ հալը, մեն մենակի, նայե-
ցէք, նայեցէք, նրան այնտեղ բարձրում... Տես-
նում էք, իւր ականջների ծայրը, որ շարժւում է...
կարծես թէ երկու ծիծեռնակներ լինին:

— Գթած Աստուած, աչքերը բարձրացնելով
ասաց պապը... Բայց գժուել է ուրեմն, բայց իրան
կսպանէ... Իջիր, թշուառական...»:

Գրողը տանի, ուզածը հենց այդ էր, բայց
~~որտեղից~~: Սանդուխտքներով, նրա մասին հար-
կաւոր չէր մտածել, դեռ կարելի էր մի կերպ
բարձրանալ, բայց իջնելիս, հարիւր անգամ հաւա-
նական էր, որ ոտքեր կկործէր... Եւ խեղճ ջորին
յուսահատ և իւր ապուշ աչքերով շարունակ կը-
տուըրի վրայ ման գալով՝ Տէստէ Վէտէնի մասին
էր մտածում:

«Ո՛հ, աւաղակ, եթէ ես ազատուեմ... որպիսի
սմբակի հարուած կստանաս վաղը առաւօտ:

Այս սմբակի հարուածի միտքը նրան միքիչ
սրտի հանգստութիւն էր տալիս, առանց սրան չէր
կարող ոտքի վրայ կանգնել... Վերջապէս լաջողուց
նրան բարձրից ցած բերել, բայց մեծ գժուարու-



7/11. 1922

այն աջակցութեան համար, որ ցոյց էր տուել ջօրուն ազատելու օրը:

Հետևեալ օրը ջօրին յուսախաբուեց, «Ո՛չ, աւազակը մի բանից կասկածել է... մտածում էր նա կատաղած իւր բոժոժները թափ տալով... Բայց միւնոյն է, գնա, չարագործ, վերադարձին կատանաս քո աքացին... Ես այդ կպահեմ քեզ համար»: Եւ նա պահեց:

Տէստէի մեկնելուց յետոյ պապի ջօրին գտաւ իւր հանգիստ կեանքը, և նրա կեանքն առաջուտոյ ընթացքն ստացաւ: Ալևս ախոռում չկալին ոչ Քիքէն և ոչ Բէլիւգին: Փրանսական գինու գեղեցիկ օրերն վերադարձել էին և նրանց հետ լաւ տրամադրութիւնը, յետ ճաշուալ երկար քունը և մեղմիկ պարը Աւինիօնի կամքից անցնելիս: Սակայն իւր արկածից ի վեր, քաղաքում նրան միշտ միքիչ սառնութեամբ էին նայում: Անցկենալիս փսխում էին, մեծ մարդիկ գլուխը շարժում էին, երեխաները ծիծաղում էին, միմեանց զանգակատունը ցոյց տալով: Բարի պապն ինքն էլ այնքան ալևս վստահութիւն չունէր իւր բարեկամի վրայ, և երբ նրա մէջքին նստած մի փոքը ննջումէր կիւրակի օրը այգուց գալիս, միշտ այս յետին — միտքն ունէր, այն է, «իսկ եթէ այնտեղ, վերեսում, տախտակամածի վրայ աչքս բաց անեմ»: Ջորին տեսնում էր այս և ցաւում առանց ոչինչ

թեամբ: Հարկաւորուեց բեռնաբարձ-մեքենալով — պադգարակով, պարաններով իջեցնել: Դուք կարող էք երևակաւել, թէ որպիսի ստորութիւն է մի պապի ջորու համար իրան այն բարձրութիւնից կախուած տեսնել, թաթերն ամալութեան մէջ շարժելիս, ինչպէս մի իշամեղու թելի ծայրին: Եւ ամբողջ Աւինիօն էր նրան դիտում:

Խեղճ կենդանին այդ անցքից յետոյ գիշերը չքնեց: Միշտ նրան թւումէր, որ ման է գալս այն անիծեալ կտուրի վրայ, քաղաքի ծաղը առարկայ դարձած: Յետոյ նա մտածում էր այդ գարշելի Տէստէ Վէտէնի և այն լաւ աքացու մասին, որ նրան հասցնելու էր հետևեալ տուաւոտ: Ո՞հ, բարեկամներս, ի՞նչ աքացի, Պապըլօնից դրա ծուխը պիտի տեսնէին... Ոյն ժումանակ, երբ նրան ախոռում գեղեցիկ լնդունելութիւն անելու համար պատրաստութիւն էին անում, գիտէք ինչ էր անում Տէստէ Վէտէն, Ոյն էր իջնում պապական պատերազմական մի նաւի վրայ երգելով, նապի արքունիքն էր գնում երիտասարդ ազնուականների խմբի հետ, որոնց քաղաքը ամեն տարի ուղարկում էր Յովհաննա թագուհու մօտ, քաղաքագիտութեան և քաղաքավարութեան մէջ վարժուելու: Տէստէն ազնուական չէր, բայց պապը ուղում էր նրան վարձատրել այն խնամքների համար, որ տարել էր իւր կենդանու վրայ, և գլխաւորապէս

ասելու, միմիայն երբ Տէստէ Վէտէին անունը արտասահնում էին իւր առջև, նրա երկար ականջները դողում էին և, մի մեզմիկ ժափով իւր որմբակների պայտը սրումէր սալայատակի վրայի:

Ալսպէս անցաւ եօթ տարի, ալս տարիներից յետոյ Տէստէ Վէտէն վերադարձաւ Նապի արքունիքից: Իւր ժամանակը դեռ չէր լրացել, այլ իմացել էր, որ պապի առաջին մանանեխապանը յանկարծամահ էր եղել Աւինիօնում, և որովհետև այդ տեղը նրան լաւ էր թւում, ուստի աճապարելով եկել էր կարգի մէջ ընկնելու:

Երբ ալս խորամանկ Վէտէն պալատի դաշլիճը մտաւ, այնքան մեծացել և լցուել էր, որ սուրբ Հայութ գիտեարացաւ նրան ճանաչել: Պէտքէ ասած, որ ինքը բարի պապն էլ ծերացել էր և առանց ակնոցների չէր տեսնում:

Տէստէն չքաշուեց:

«Ի՞նչպէս, Վեչ Սուրբ-Հայր, դուք ինձ չէք ճանաչում. . . Ես եմ, Տէստէ Վէտէն...»

— Վէտէն...

— Բայց ալո՛, դուք գիտէք... Նա, որ ֆրանսիական զինի էր տանում ձեր ջորուն:

— Ո՛չ, ալո՛... ալո՛... յիշում եմ... Մի լաւ փոքրիկ մանկիկ, այն Տէստէ Վէտէն... Ոյժմ ինչ ուզում մեզանից:

— Ո՛հ, քիչ բան, վեչ Սուրբ-Հայր... Գալիսեմ Զեզանից խնդրելու... Լաւ միտքս ընկաւ, կենդանի է գեռ ձեր ջորին, լաւ է... Ո՛հ, ինչ լաւ որ... Գալիս էի ձեզանից խնդրելու, նոր մեռնող առաջին մանանեխապանի տեղը:

— Առաջին մանանեխապան, դու... Բայց դու շատ ջահէւ ես: Բայց քանի տարեկան եւ:

— Քսան տարեկան երկու ամսական վեհափառ հայրապետ, Ճիշտ Հինգ տարով ձեր ջորուց մեծ... Ո՛հ, Սստուած իմ, սիրուն կենդանին... Եթէ գիտենալիք ինչպէս սիրում էի այդ ջորուն... Ի՞նչպէս, ես կարօտում էի նրան Իտալիոյում... Միթէ ինձ թոյլ չպէտքէ տաք նրան տեսնել:

— Ալո՛, որդեակ, դու նրան կտեսնես, պատասխանեց բարի պապը ըուզովին յուզուած... Եւ որովհետև դու այնքան սիրում ես այս քաջ կենդանուն, չեմ ուզում, որ դու նրանից հեռու ապրիս: Ալս օրուանից ես քեզ ինձ կմօտեցնեմ առաջին մանանեխապանի պաշտօնով... Իմ կարդինալները պիտի մըթմըթան, բայց ինչի՞ս է հարկաւոր, գրան վարժուել եմ... Վաղը, երեկոյեան ժամից յետոյ արի ինձ գտնիր, կղերական խորհրդի ներկայութեամբ քո պաշտօնի շքանշանները վրադ կկախենք, և յետոյ... Ես քեզ կտանեմ ջորուն տեսնելու, և դու մեզ երկուսիս հետ այգին կգաս... Հը, հը, դէս, գնա...»

Որքան Տէստէ Վէտէն գոհ էր մեծ դաշլիճից
դուրս գողիս, որպիսի անհամբերութեամբ սպա-
սում էր վաղուայ արարողութեան, կարիք չունիմ
ձեզ ասելու, բայց պալատում մէկը կար, որ նրա-
նից աւելի երջանիկ և աւելի անհարեր էր, դա
ջորին էր: Տէստէնի վերադարձից մինչև հետևեալ
օրուայ երեկոյեան ժամերգութիւնը, տարօրինակ
կենդանին չդադարեց գարով փորը լցնելուց և յե-
տեսի սմբակներով պատին աքացի տալուց: Նա էլ
պատրաստում էր արարողութեանը:

Արդ, հետևեալ օրը, երբ երեկոյեան ժամը
արձակուեց՝ Տէստէ Վէտէն մուտք գործեց պապի
պալատի բակը: Բոլոր բարձրաստիճան կղերական-
ներն ալնտեղ էին, կարդինալները կարմիր պարե-
գոտ հագած, սատանայի փաստաբանը՝ ուել թաւ-
շեայ զգեստով, վանքի աբեղաները՝ իրանց փոքրիկ
խոյրերով, սուրբ Ագրիգոլի կառավարիչները, իշ-
խանական, մտնիշակագոյն թիկնոցները, ստորին
կարգի կղերականներն էլ, պապի զինուորները —
համազգեստով, երեք ապաշխարող եղբայրութիւն-
ները, Վանդոքս լերան միայնակեցները՝ իրանց
այլանդակ կերպարանքներով և յետեսից եկող զան-
գակիր փոքրիկ մոնթը, Զաղկւող¹⁾ եղբայրները,

¹⁾ Մի տեսակ աղանդաւորներ էին, որոնք իրանք
իրանց հրապարակաւ ձաղկում էին:

մինչև մէջքը մերկ, Տաղկազգեստ լուսարարները՝
դատաւորների պարեգութեաներով. բոլորը, բոլորը,
մինչև անգամ օր հնած ջուր բաժանողը, ճրագ
վառողը, հանգցնողը, միայն մի հոգի պակասում
էր... Ո՛չ, սա մի գեղեցիկ ձեռնադրութիւն էր:
Զանգակներ, հրախաղաց փամփուշտներ, լուսա-
վառութիւններ, երաժշտութիւն և այս կատաղած
թմբկահարները, որ պար էին ածում Աւինիօնի
կամրջի վրայ:

Երբ Վէտէն ժողովի մէջը երևաց, իւր ծանրա-
բարոյութիւնը և գեղեցիկ կերպարանքը զարմանքի
մի շշուկ տարածեց ալնտեղ: Սա մի վայելչագեղ
Պրօվանսացի էր, բայց խարտեաշ, և գանգրածալը
մազերով և աղուամազ մօրուքով, որ կարծես թէ
ծածկուած էր իւր ոսկի քանտակով հօր փորագլր-
չից ընկած բարակ մետաղի տաշեղի մանրունքով:
Լուր էր պտտաւում, թէ այս շեկ մօրուքի մէջ,
Յովհաննա թագուհու մատները մի քանի անգամ
խաղացել էին, և պարոն Վէտէն արդարեւ այն
մարդոց ամբարտաւան կերպարանքը և անուշադիր
հայեացքն ունէր, որոնց թագուհիներ սիրել էին:
Սյոյ օրը, իւր ազգի պատուի համար իւր նազո-
լական հանգերձները փոխել էր վարդագոյն եղերք-
ներով պրօվանսական մի բաճկոնի հետ, և գլխար-
կի վրայ տատանւում էր Քամարգայի եգիպտա-
հաւի (ibis) մի մեծ փետուր:

Մանելուն պէս, առաջին մանանեխապետը
սիրալիք բարեկեց և ուղղուեց դէպի վերնագաւիթը,
ուր պապը նրան էր սպասում իւր պաշտօնի շքա-
նշանները տալու համար—դեղին տասախի (buis)
գդալ և քրքումի (զափրան) գոյն հանգերձ: Զորին
սանդուխքի տակն էր, լաւ զարդարուած և պատ-
րաստ ալդին գնալու: Երբ Վէտէն նրա մօտից
անցնում էր, քաղցր ժպտաց և կանգ առաւ նրա
կոնակին երկու կամ երեք մեղմ, բարեկամական
հարուածներ տալու, աչքի ծալրով պապին նալե-
լով, թէ տեսնում է: Լաւ գրութիւն էր: Զորին
աշխոլմացաւ: «Հը, առ, աւազակ, ահա, եօթ-
տարի է, որ քեզ համար պահումէի»: Եւ նրան
մի այնպիսի սաստիկ աքացի զարկեց, այնքան սաս-
տիկ, որ Պամալիւնից իսկ ծուխը տեսնում էր,
շիկագոյն ծխի մի մառախուղ, ուր թռչկոտում էր
եգիպտահաւի մի փետուր, ամէն այն, ինչ որ մնում
էր դժբախտ Տէստէ Վէտէնից:

Զորինների աքացիները սովորաբար այնքան
շանթող չեն լինում, բայց սա պապի ջորին էր, և
ապա, մտածեցէք, եօթ տարի էր, որ նրա համար
պահում էր: Սրանից աւելի գեղեցիկ օրինակ չկայ
կղերական ոխակալութեան համար:

II.

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՅՐ**Գ Օ Շ Ե Ր Ի Ց Ք Ի Ն**

առանձ կատ քարայ մասմբ և ուզուն մազքո
շանե օրու և խոհմազար պարագով վշար
ու խոհմազարից օրուարդ սա մամազա
մամազա

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՅԻ ԳՈՃԵՐԻ ՅՔԻՆ^{*)}



Խմեցէք ալս, գրացիս, դուք կտեսնէք թէ
ինչքան լաւ է դա:

Եւ կաթիլ կաթիլ, մարգարիտներ հաշուող
ակնավաճառի մանրակըկիտ խնամքով, Գրավլզօնի
երէցն երկու մատնաչափ, մի կանաչ, ոսկեզօծ,
տաք, շղջողուն, լնտիր հեղուկ ածեց ինձ հա-
մար... Դրանով ստոմաքսս լաւ տաքացրի:

«Սա հայր Գօշերի ցքին է, մեր Պրօվանսի
ուրախութիւնը և առողջութիւնը, ասաց ինձ
բարի մարդը լաղթական եղանակով, «այս պատ-
րաստում են ձեր ջրաղացից երկու մղոն հեռու
Պրէմօնտրէների վանքում...: Զէ որ այս արժէ
բոլոր շարտեօզներին աշխարհիս երեսին... Եւ եթէ
գիտենալիք թէ ինչքան զուարձալի է այս ցքու
պատմութիւնը...: Աւելի լաւ է որ լսէք...»:

Այն ժամանակ, բոլորովին պարզմտօրէն, ա-
ռանց չարամտութեան, աբբան սկսեց իրիցատան

^{*)} Նամակներ իմ ջրաղացից:

այնքան մաքուր և այնքան խաղաղ, խաչի ճանապարհի փոքրագիր պատկերներով և սիրուն ժամաշապիկների պէս զարդարուն վարագոյններով սեղանատանը, մի փոքրիկ, թեթևակի, երկբայական և անակնած պատմութիւնն, Երազմի կամ Ասուսի պատմութիւնների ձեռվ:

Քսան տարի է, որ Պըէմօնտարէները, կամ, ինչպէս մեր Պըօվանսացիները կոչում են, սպիտակ հայրերը աղքատութեան մէջ էին. Եթէ նրանց այդ ժամանակուալ տունը տեսած լինէիք, այդ ձեզ մեծ վիշտ կպատճառէր:

Մ'էծ պարիսպը, Պակօմ աշտարակը վլչելու վրայ էին: Վանքի ամբողջ բակը ծածկուած էր խոտով, սիւնակները ճեղքուած էին, սրբերի քարէ արձանները կործանուել էին իրենց խորշերում:

Ոչ մի պատուհան կանգուն, ոչ մի դուռ հստատուն չէր: Ուսի հողմը փչում էր գաւիթներում, մատուռներում, ինչպէս Քամարգայում, Հանգյնելով մոմերը, ջարդելով պատուհանները, թափելով օրհնած ջուրը: Բայց ամենից աւելի տխուը վիճակի մէջ էր վանքի զանգակատունը, որ լուռ էր գատարկ աղաւնանոցի պէս, և վանականները մի զանգ գնելու դրամ չունենալով՝ ստիպուած էին առաւօտեան ժամերգութեան հրաւիրել նշենու փայտից շինած կոչնակներով:

Խեց ճերմակ վանականներ, գեռ աչքիս առջևն են, հաղորդութեան տօնի թափօրին շարքով անցնելիս, տիուր, իրենց կարկատուն կնդղաւոր վերաբկուներով, գունատ, նիշար, ձմերուկավ և գտրի հայով սնուած և նրանց յետեից գերապատիւ աբբան, որ գալիս էր գլուխը խոնարհած և խիստ ամօթկալած արեկին ցոյց տալու ոսկեթափ գաւազանը և ցեցակեր սպիտակ բրդէ խորը:

Եղբայրութեան մայրապետները կարեցութիւնից թափօրի շարքերում լաց էին լինում, և կոպիտ դրօշակակիրներն իրանց մէջ, ցածր ձայնով մատնանիշ անելով խեց վանականներին, «տարմահատերը (etournau) նիշարում են, երբ երամով են ապրում»: Բանն այս է, որ գժեազդ սպիտակ հայրերը հէնց իրենք այնտեղ էին հասել, որ մտածում էին, թէ աւելի լաւ չէին անել եթէ թռչէին աշխարհիս զանազան կողմերն և ամեն մէկն իւր կերը որոսնէր:

Արդ, մի օր, երբ այս ծանր խնդիրն յուգուում էր վանականների ժողովում, աբբա հօրն իմաց տուին, որ եղբայր Գօշէրը կամենում էր, որ խորհուրդը լսէ իրեն... Ի տեղեկութիւն պիտի գիտենաք, որ այս եղբայր Գօշէրը վանքի եզնարածն էր, այսինքն նա իւր օրերը անց էր կացնում վանքի մի կամարից միւսը թափառելով, իւր առշնչից քշելով երկու նիշար կովեր, որոնք խոտ էին

որոնում սալայատակների ճեղքերում։ Մինչև տասներկու տարեկան հասակը սնուած լինելով Դէքօն երկրի մի խելառ պառաւի ձեռքին, որին մօրաքոյը Բէգօն էին անուանում, յետոյ աբեղանելի մօտ ընդունուելով, խեղճ եզնարածը իւր անասուններն արածացնելուց և իւր հալրմերը կարդալուց ի զատ երբէք ոչինչ չէր կարողացել սովորել. Հայր մերն անգամ Պրօվանսի գաւառաբարբառով էր ասում, որովհետեւ նա կարծր ուղեղ ունէր և կապարեալ դաշոյնի պէս նուրբ միտք։ Սակայն ջերմեռանդ քրիստոնեալ էր նա, թէև մի քիչ ցնորամիտ, քըձի մէջ գոհ, և զօրեղ համոզումով ճգնութիւնների նուիրուած և բազուկներ ունէր...»

Երբ տեսան նրան պարզ և ապուշ, սրունդները յետ դարձրած ժողովին բարեկելով կրօնական ժողովը մտնելիս՝ վանահայրը, կանոնիկոսները, գանձապահը, բոլորն էլ սկսեցին ծիծաղել։ Միշտ միւնոյն ազգեցութիւնն էր գործում, երբ այս բարի, ալեխառն այծի մօրուքով և փոքրինչ խելագարի աչքերով մարդը, մի տեղ երկում էր, ուստի եղբայր Գօշէրն էլ չվրդովուեց։

«Վերապատուելիներս, ասաց մի բարձր տոնով, ձիթապատուզի կորիզից տէր-ողորմեան քաշելով. շատ իրաւամբ ասել են, թէ դատարկ տակառներն են, որ լաւ երգում են։ Երեակալեցէք, իմ խեղճ գլուխը, որ առանց այդ էլ շատ լիքը չէ, շատ

պատուելով, կարծում եմ, որ գտել եմ բոլորովին նեղութիւնից ազատուելու մի միջոց։

«Ահա թէ ինչպէս։ Դուք լաւ էք ճանաչում հօրաքոյը Բէգօնին, այն բարի կնոջը, որ երբ ես փոքր էի, պահում էր ինձ։ (Աստուած հոգին լուսաւորէ, չարաճճի՛ պառաւ։ Նա հարբելիս շատ տգեղ երգեր էր երգում)։ Այդ պիտի ասեմ ձեզ, վերապատուելի՛ հալրես, որ հօրաքոյը Բէգօն իւր կենդանութեան ժամանակ լաւ էր ճանաչում լեռների խոտերը, մի Քօրսիկացի հին սարեակից էլ լաւ։ Պէտք է ասել, նա իւր կեանքի վերջին օրերում մի աննման ցքի էր ոլատրաստում հինգ կամ վեց աեսակ բուժախոտերի խառնուրդից, որ միասին կերթանք փոքր Ալպերի վրայ որոնելու։ Պատմածը շատ տարուայ բան է, բայց կարծում եմ, որ սուրբ Օդոստինոսի օգնութեամբ և մեր հայր աբբայի թուլտութեամբ կկարողանամ—լաւ որոնելով—այս խորհրդաւոր ցքու բաղադրու թիւնը գլուխնել։ Այն ժամանակ մեղ կմնայ նրան շշերի մէջ ածել և մի քիչ թանգ ծախել, որ միջոց կտայ մեր միաբանութեան կամաց կամաց հարստանալուն, ինչպէս որ անում են մեր տրապակեան եղբայրները և Մեծ...»։

Նա խօսքը վերջացնելու ժամանակ չունեցաւ։ Վանահայրը վեր էր կացել նրա վզովը փաթաթուելու։ Կանոնիկոսները նրա ձեռքերն էին բըռ-

նում: Գանձապետը բոլոր միւսներից աւելի յուղուած, լարգանքով համբուրում էր նրա կնդուղի բոլորովին մաշուած եզերքը... Ապա իւրաքանչիւր ոք դարձաւ իւր տեղը խորհրդակցութիւնը շարունակելու համար, և նոյն նիստի մէջ կրօնական ժողովը վճռեց, որ կովերը եղբայր Տրափիբելին յանձնուին, որպէս զի հայր Գօշէրը կարողանալ ամբողջապէս նուիրուել իւր ցքի պատրաստելու դորձին:

Թէ ի՞նչպէս այս բարեմիտ եղբայրը կարողացաւ հօրաքոյր Բէգօնի բաղադրութիւնը գտնել, ի՞նչ աշխատանքի գնով, ո՞րպիսի տքնութեամբ, պատմութիւնը այդ չէ ասում: Միայն հաւաստին սա է, որ արդէն իսկ վեց ամսից յետոյ սպիտակ հայրերի ցքին ընդհանրացած էր: Ամբողջ կոմսութեան մէջ, բոլոր Արլի աշխարհում, չկար ոչ մի գիւղ, ոչ մի համբարանոց, որ իւր մասանում եփած գինու շշերի և ձիթապտղի կարասների մէջ, չունենար մի փոքրիկ, մոլոր կաւէ սրուակ, կընքուած Պրօվանսի դրօշմանիշով, արծաթափալլ թղթէ յալտագրով (էտիքէտ), որի վրայ մի չողեզմալլեալ վանականի պատկեր կար Իւր ցքու հուշակի շնորհիւ Պրէմօնտրէների տունը շատ արագ հարստացաւ: Պակօմ աշտարակը վերականգնուեց: Վանահայրը մի նոր խոյր ունեցաւ, եկեղեցին՝ գեղեցիկ, գարդարուն, ապակեալ, պատուհանների վերականգնուեց: Վանահայրը մի նոր խոյր ունեցաւ, եկեղեցին՝ գեղեցիկ, գարդարուն, ապակեալ, պատուհանների վերականգնուեց:

տան նուրբ ժանեակի մէջ, զանգերի և զանգակների մի խումբ, զատկի մի գեղեցիկ առաւատ սկսեցին զարկուել, թնդալով՝ և ուժգին, նուազաւոր հնչել դէպի հեռուն:

Եղբայր Գօշէրին գալով, այս խեղճ աշխարհական եղբօր մասին, որի գեղջկութիւններն այնքան զուարճացնում էին միաբանութեան, այլևս խնդիր չեղաւ վանքում: Այնուհետև վերապատռելի հայր Գօշէրին ճանաչեցին իբրև գլխի և մեծ գիտութեան տէր մի մարդու, որ կատարելապէս մեկուսացած էր ապրում վանքի այնքան մանր և բազմատեսակ զբաղմունքներից և ամբողջ օրը փակւում էր իւր զտարանում, մինչդեռ երեսուն արեղայ լեռներ ոտքի տակ էին տալիս անուշահոտ խոտեր որոնելու նրա համար: Այս զտարանը, ուր ոչ ոք, մինչև իսկ վանահայրը իրաւունք չունէր մտնելու, երեսի վրայ թողնուած մի հին մատուռ էր, հէնց կանոնիկոսների պարտէզի ծալրին: Միամիտ հայրերի պարզամտութիւնը դրան մի խորհրդաւոր և զարհուրելի բան էր դարձել, և եթէ պատահմամբ մի համարձակ և հետաքրքիր աբեղայիկ, մագլցելով խաղողի որթի վրաից հասնում էր մինչև գռան վարդակե լուսամուտը, այնտեղից շուտով յետ էր դառնում հայր Գօշէրին տեսնելու սարսափից, որ իւր կախարդի մօրուքով թեքուած էր հնոցների վրայ, խմիչքաչափը ձեռ-

քին, շուրջը վարդագոյն կաւաւազեայ ծուռ-ձիտ
ամաններ, հսկայական թորանոցներ, բիւրեղեալ
խտանոցներ, բոլորը մի անհեթհեթ կուտակում,
որ կախարդիչ կերպով շողշողում էր պատուհան-
ների կարմիր լոյսի մէջ։ Սրեւ մայր մտնելիս, երբ
«Հրեշտակ Տեառն» աղօթքի գանդը հնչում էր,
այս խորհրդաւոր վայրի դուռը կամացուկ բացւում
էր և վերապատուելին երեկոյեան աղօթքի համար
եկեղեցի էր գնում։ Պէտք էր տեսնել, ի՞նչ ընդու-
նելութիւն էր լինում, երբ նա վանքով անցնում
էր։ Եղբայրները շարուում էին նրա ճանապարհի
վրայ։ Ասում էին, «Սուսս... գաղտնիքը նրա ձեռ-
քին է...»։ Գանձապահը հետեւում էր նրան և
գլուխը խոնարհած խոսում էր նրա հետ... Այս
բոլոր մարդահաճութիւնների մէջ հայր սուրբը
հեռանում էր ճակատի քրտինքը սրբելով, իւր
եռածալը, լայն եղերքներով գլխարկը սրբերի պատ-
կի նման գէպի յետ դրած, զուարթ գէմքով իւր
կի նման գէպի յետ դրած, զուարթ գէմքով իւր
շուրջը նայելով, մեծ նարինջի ծառերով բագերին,
կապոյտ կտուրներին, ուր շուռ ու մուռ գալիս էին
նոր հողմնացոյցներ և սպիտակութեամբ փալող
սրահի վայելչագեղ և զարդարուն սիւների մէջ
վայելուչ կերպով հագնուած կանոնիկոսներին,
վայելուչ կերպով հագնուած կանոնիկոսներին,
վայելուչ կերպով հագնուած կանոնիկոսներին,
վայելուչ կերպով հագնուած կանոնիկոսներին,
էին կենթում։

«Այս ամենը ինձ են պարտական», ասում էր
իւր մտքում վերապատուելի հայրը, և շատ ան-
գամ այս մտածմունքը նրան անկարծելի հպար-
տութեան էր տանում։

Խեղճ մարդը այդ պատճառով լաւ պատժուեց։
Աչա թէ ինչպէս...»

Երեակայեցէք, մի երեկոյ, պլաշտամունքի
ժամանակ մի արտասովոր յուզման մէջ եկեղեցի
մտաւ, կարմրատակած, շնչասպառ, վեղարը թեք-
ուած և այնքան վրդովուած, որ օրհնած ջուրը
առնելիս՝ թևերը մինչեւ արմունկը մէջը մխեց։
Սկզբում կարծեցին, որ յուզմունքը ուշ գալուց էր
առաջացել, բայց երբ տեսան փոխանակ մայրսե-
ղանին գլուխ տալու նուագարանին և բեմերին է
խոր գլուխ տալիս, քամու արագութեամբ եկեղե-
ցու միջով անցնելը, իւր աթոռը գտնելու համար
հինգ րոպէ գասում թափառելը, յետոյ մի անգա-
մից նստելը, ապուշ գէմքով ժպտալով աջ ձախ
ծոռուելը՝ զարմանքի մի քչփչոց անցաւ երեք ներ-
քին գաւկիթների մէջ։ Փափսում էին գասից գաս,
«Ի՞նչ է եղել մեր Հայր Գօշէրին... ի՞նչ է եղել
մեր Հայր Գօշէրին...»։ Երկու անգամ վանահայրը
«Համբերութիւն Աստուած», լուութիւն հրամայելու
համար, իւր գաւազանը սալայատակին զարկաւ։
Այնտեղ, գասի խորքում սաղմոսասացութիւնները
շարունակում էին, բայց պատասխաններն ուշա-
նում էին։

Յանկարծ (առ verum)-ի մէջ տեղում, աշա
մեր հայր Գօշէրը պառկեց աթոռի մէջ և մի
խրոխտ ձախով սկսեց երգել

Պարիզում մի սպիտակ հայր կայ
Պատատէն, պատատուն, տարաբէն,
տարաբուն և այն:

Հնդհանուր տարակուսանք տիրեց: Բոլորը
վերկացած աղաղակում էին, «Ճարէք դրան... այսա-
հար է»: Կանոնիկոսներն երեսները խաչակնքեցին:
Սրբազնի գաւաղանը սկսաւ շարժակոծել.. Բայց
հայր Գօշէրը ոչինչ չէ տեսնում, ոչինչ չէ
լսում, և երկու ուժեղ աբեղաներ ստիպուեցին
նրան քաշ տալ գասի փոքր դռնով, որ իբրև մի
դեպուկ կուռում էր և շարունակում էր աւելի
գեղեցիկ կերպով իւր պատատէն և տարաբունը:

Հետևեալ օրը, լուսածագին թշուառականը
վանահօր աղօթարանում ծնկաշոք, արտասուքի
գետ թափելով՝ խոստովանում էր, «Ճքին էր Սը-
բազնն, քքին էր, որ ինձ յանկարծակիթ բերեց»,
կուրծքը ծեծելով՝ ասում էր նա: Եւ նրան այն-
քան գեղջի եկած, այնքան ստրջացած տեսնելով՝
բարի վանահայրը ինքն իսկ սաստիկ լուզուեցաւ:

— Ոչինչ, ոչինչ հայր Գօշէր, հանդարտուե-
ցէք, այս բոլորը կչորանայ ինչպէս ցօղն արևի տա-
կին... Բացի դրանից խալտառակութիւնն էլ այն-
քան մեծ չէր, ինչպէս դուք կարծումէք: Միայն

երգը, որ երգւումէր, մի փոքր... հըմ, հըմ...
Վերջապէս պէտք է յուսալ, որ նորընծաներ
լսած չեն լինի ալդ: Այժմ, տեսնենք, ասացէք
ինձ, ինչպէս պատահեց ձեզ այս բանը... Ցքին
փորձելիս էր, այնպէս չէ: Դուք շատ ծանր ձեռք
ունեցած կլինէք... այն, այն, հասկանում եմ...
Վառողի հնարող եղբարը Նվարցի պէս է եղել,
դուք ձեր գիւտին զոհ էք եղել... Ասացէք ինձ,
բարեկամ, շատ անհրաժեշտ է, որ դուք հէնց ձեր
վրայ փորձէք այս սոսկալի ցքին:

— Դժբաղդաբար այն, սրբազն, փորձիչ գոր-
ծիքը լաւ ցոյց է տալիս ինձ ալքօհօլի զօրութիւնը
և աստիճանը, բայց կատարելութիւնը փորձելու
համար աւելի լեզուիս եմ վստահանում:

— Ա՛հ, շատ լաւ... մի փոքր էլ լսեցէք,
ձեզ ասեմ... Երբ դուք այսպէս կարիքից ստիպուած
ցքու համը ճաշակում էք, լմէ է թւում ձեզ,
դրանով հաճուք զգո՞ւմ էք:

— Աւալ, այն, Սըբազան տէր, պատասխանեց
թշուառ հայր սուրբը բթորովին կարմրատակած...
Ահա երկու երեկոյ է, որ ես նրա մէջ գտնում եմ
մի յատուկ անուշահոտութիւն: Անշուշտ սատանան
է ինձ այս վատ խաղացողը: Նոյնպէս վճռել
եմ այսուհետեւ միայն փորձիչ գործիքը գործածել:
Նատ հարկաւորս է, եթէ խմիչքը բաւական ըն-
տիր, բաւական շողշողուն չի լինի...:

— Զգուշացէք, ընդմիջեց նրան վանահայրը աշխուժութեամբ։ Զպէտք է առիթ տալ գնողների գժգոհութեանը։ Այս նախապէս իմաց եմ անում ձեզ, այժմ ձեր անելիքն այն է, որ զգոյշ լինէք... Տեսնենք, որքան է հարկաւոր ձեզ փորձելու համար... Տասնհինգ կամ քսան կաթի, այդպէս չեմ... Ասենք քսան կաթիլ լինի։ Սատանան շատ խորամանկ պիտի լինի, որ քսան կաթիով ձեզ բռնի... Դարձեալ, բոլոր դիպուածների առաջն առնելու համար, ես ձեզ աղաչում եմ սրանից յետու եկեղեցի գալ։ Երեկոյեան ժամը զտարանում կասէք... Այժմ գնացէք խաղաղութեամբ, իմ վերապատուելիս և մանաւանդ... Լաւ հաշուեցէք ձեր կաթիլները։

Աւազ, խեղճ վերապատուելին շատ էլ լաւ էր հաշում իւր կաթիլները։ Դեք նրան բռնել էր, այլևս բաց չէր թողնում։

Զտարանն էր միայն, որ լսում էր արտասնվոր աղօթքները։ Ցերեկով ամեն ինչ լաւ էր անցնում։ Հայր Սուրբը բաւական հանդարտ էր, պատրաստում էր իւր կրակարանները, խտանոցները, ընտրում էր խնամքով իւր խոտերը — Պրօվանսի բոլոր նուրբ, մոխրագոյն, ծոպաւոր, արևից և անուշահոտութիւնից չորացած խոտերը։ Բայց երեկոյեան, երբ բուժախոտերը լուծում էին և ցքին սառչում էր կարմիր, պղնձէ մեծ աւազանի մէջ, խեղճ մարդու մարտիրոսութիւնը սկսում էր։ «Տասնեօթ... տասն-

ութ... տասնինն... քսան...», կաթիլներն եղեգից ընկնում էին կարմրագոյն սկաւառակի մէջ։ Այդ քսանը հայրը կուլ էր տալիս միանգամից, գրեթէ առանց բաւականութիւն ստանալու։ Նրան քսան-և մէկերրորդի ցանկութիւնն էր գալիս։ Ո՞հ, այս քսան և մէկերրորդ կաթիլը... Այն ժամանակ փորձութիւնից խոյս տալու համար, գնում ծունկ էր չոքում իւր գործարանի ծայրում և խորասուզ-ւում էր հայրմերների մէջ։ Բայց այդ դեռ տաք խմիչքից անուշահոտութեամբ լի մի թեթև շոգի էր բարձրանում, որ նրա շուրջը պտտում էր և կամայ ակամայ նրան դէպի աւազաններն էր քաշում... Խմիչքը կանաչ սոկզօծ գոյն ուներ... Նրթունքները բաց, թեքուած, հայրը իւր եղեգով նրան խառնում էր շատ մեղմ կերպով և զմրուխտեալ ալիքից շարժուող փոքրիկ շողշողուն շիւղերի մէջ, նրան թւումէր, թէ հօրաքոյր հէքօնի չարալից աչքերն է տեսնում, որ ծիծաղում էին և բոցավառում նրան նայելով. գէհ, մի կաթիլ էլ։ Եւ կաթիլ առ կաթիլ թշուառականը վերջացնում էր մինչև բերանը լիք սկաւառակը։ Այն ժամանակ ուժասպառ ընկնում էր մի մեծ բազկաթոռի մէջ և մարմինը լքուած, աչքերը կիսովին փակ, մեղքի համն առնումէր քիչ քիչ, իւր մէջ ցած, մի զարմանալի խղճահարութեամբ ասելով. «Ո՞հ, ես ինձ դատապարտում եմ... Դատապարտում եմ...»

Մարսափելին այն էր, որ այս սատանայական ցքու մէջ, չգիտեմ ինչ կախարդութիւնով, նա գտնում էր հօրաքոյր Բէգոնի բոլոր վաս երգերը. «Երկու փոքր սանամայրեր են, որ մի կոչունք են ուզում սարքել...։ Կամ պարոն Անդրէի հովուուշին անտառ է գնում միայնակ և միշտ սպիտակ հալուերի համբաւաւոր պատաժէն...։» Երեակալեցէք, ինչ շփոթութիւն էր ծագում, երբ իւր խցի հարեանները նրան չարամտութեամբ ասում էին. «Հ՞ը, հ՞ը, հայր Գօշէր, դուք երէկ երեկոյեան քնելիս լաւ կոնծած էիք։ Այն ժամանակ սկսում էին արտասունքներ, յուսահատութիւններ, ծոմապաշչութիւն, քուրձ և ճգնութիւն։ Բայց ամեն ինչ անզօր էր ցքու դեկի դէմ, և բոլոր երեկոները միենոյն ժամին նոյն դրութիւնը վերսկսում էր։

Այդ միջոցին, անձրեկ պէս, իբրև մի օրհնութիւն միաբանութեան վրայ պատուէրներ էին տեղում։ Այդ պատուէրները գալիս էին Նիմից, Եքսից, Ավինիօնից, Մարսէլից... Օրէցօր վանքը մի պղտիկ գործարանի կերպարանք էր ստանում։ Կային բեռ կապող եղբայրներ, համարներ փակցնող եղբայրներ. մի քանիսը գըագրութիւններ էին անում, այլք ցած սալերով բեռներ էին փոխադրում։ Աստծու պաշտամունքը բաւական կորցնում էր իւր ծէսերից, բայց երկը աղքատները ոչինչ չէին կորցնում, հաւատացնում եմ...»

Արդ, մի գեղեցիկ կիրակի առաւօտ, երբ վանքի գանձապահն ամենայն եռանդով կարդում էր տարուայ վերջի հաշուեկշիռը և կանոնիկոսները նրան լսում էին բոցավառուած աչքերով և ժպիտը շրթունքներին՝ ահա հայր Գօշէրը ներս է պղծնում ժողովի մէջ աղաղակելով. «Վերջացած է... Ալլաս չեմ անում... Տուէք ինձ իմ կովերը»։ Ի՞նչ կայ, հայր Գօշէր», հարցրեց վանահալրը, որ հասկանում էր մի փոքր բանի էութիւնը։

— Ի՞նչ կայ, սրբազն... Այս կայ, որ յաւիտենական բոցերի և երկժանու հարուածներին պատրաստուելու վրայ եմ... Այս կայ, որ ես խըմում եմ, որ ես խմում եմ, որպէս մի թշուառական։

— Բայց ես ձեզ ասել էի, որ հաշուէիք կաթիլները։

— Ո՛չ, ճիշուէ, կաթիլներս հաշուել, այժմ սկաւառակներով պէտքէ հաշուել... Այս, իմ վերապատուելիներս, ես այդ տեղն եմ հասել։ Երեք սրուակ ամեն երեկոյ... հասկանում էք, որ այսպէս չէ կարող շարունակուել... Յքին շինել տուէք, ում ձեռքով որ ուզում էք... Աստծու կրակն ինձ այրէ, եթէ ես էլ խառնուեմ։

Ընթերցումը դադարեց։

«Բայց թշուառական, դուք մեզ կսնանկացնէք», գոռում էր գանձապահն, իւր մեծ գիրքը շարժելով։

— Կգերադասէք, որ ես դժոխքի բաժին դառնամ...

Սուր ժամանակ վանահայրը վերկացաւ:

«Վերապատուելի՛ հարք, ասաց նա մեկնելով իւր գեղեցիկ սպիտակ ձեռքը, ուր փայլում էր հովուական մատանին, կայ միջոց բոլորը կարգադրելու... Երեկոյեան է, այնպէս չէ, սիրելի որդեակա, որ դեզ քեզ փորձում է:»

— Այս, Սրբազն արքա հայր, կանոնաւոր կերպով բոլոր երեկոները... Նոյն իսկ այժմ, երբ տեսնում եմ գիշերը վրայ է հասնում, հեռի ձեր յարգութիւնից, ինչպէս Գապիտուի էշը համետի բերելը տեսնելիս՝ քրտինքի մէջ կորչում եմ:

— Երբ այդպէս է, ապահով եղէք... այսուհետև բոլոր երեկոները, ժամ ասելիս քեզ համար սուրբ Օգոստինոսի աղօթքը կկարդանք, որ տալիս է կատարեալ թողութիւն... Դրանից յետոյ էլ որ պատահի, գուք ապահով կլինէք... Երբ մեղք է դործւում, արձակում կլինի:


— Ո՞չ, լաւ ուրեմն, շնորհակալութիւն, Սրբազն տէր: Եւ առանց այլևս հարցնելու, արտույտի թեթևութեամբ դարձաւ նա իւր մզիչ գործիքների մօտ:

Սրբարեւ, այդ ըոպէից սկսած ամեն երեկոյ, հանգստեան աղօթքը վերջացնելուց յետոյ, ժամարաը ասումէր. «Աղօթենք մեր խեղճ հայր

Փօշէրի համար, որ իւր հոգին զոհում է միաբանութեան շահերին:.. Տէրողորմեա: Եւ երբ այս սպիտակ քողերի վրայ, գաւիթների ստուերների մէջ ծունկի եկած, ձիւնի վրայ փողող թեթև, սառն քամու նման գողգոջիւն ձայնով աղօթք էր կատարւում այնտեղ, վանքի ծայրին, զտարանի բոցավառուած ապակիների յետևից լսում էր հայր Փօշէրի ձայնը, որ մէկ գլուխ երգում էր:

Պարիզում մի սպիտակ հայր կայ
Լայ լայ լամ, տրայ լայ լամ,
Պարիզում մի սպիտակ հայր կայ,
Որ պար է ածում ճնճղկիկներին,
Տրին, տրին, տրին, մի պարտիզում
Որ պար է ածում...

...Սյոտեղ բարի երեցը սարսափահար կանգառաւ. «Սատուած իմ, եթէ իմ ծխականներս ձայնս լսէին»:





2-01124



Գիւն է 104.

1957

2013

